

սրն անիմաստութեամբ իբրև զանասունն 'ի մահա՛խ խառանեալ և 'ի խրդա՛ն դանդա՛լեալ . քունդի " Կոյր զրկի , , 'ի ճառագայթից արեգական , և , , տգիտութիւն զրկի 'ի կատարեալ , , կենաց , , . ուսիր զիմաստութիւն , վախճան բանիս , զի և անմահութեն զոր անդ վայելիցես՝ մնայցէ յիշատակ և աստէն , որպէս զհոտ վարդի և զհալուէի որ զկնի ծաղկանցն անցելոց . և մի լինիցիս նման այնոցիկ " Արոց զի , , մաստութեամբ զանց արարեալ՝ ոչ , , միայն վնասեցան տա 'ի չճանաչելոյ , , զբարիս , այլ և զանմտութեան յի . , , շատակ թողին յաշխարհի , , :

ՍՎ բարեբաղդի հանդիպեալ դարու և վիճակի մանկունք Հայաստանեայց , և դուք դաստիարակք իմաստութեան , և դուք բարերարքք և նորին աճելութեան պատճառք , ընթացարուք իւրաքանչիւր հաւատարմութեամբ յիւրական շաւիղս ասպարիզացն իմաստութեան , զոր ամենախնամ գթութիւն բարձրելոյն եբայ վերստին 'ի Հայաստան աշխարհիս . ահա ընկերք ձեր առաքինիք 'ի գլուխ ստադին հասեալ կան պսակաւորք ի հանդիսադրին ( իսուսի իմաստութեանն իսկականի ձեմն առեալ , և ձեռամբ վարուց ձեզ խրախոյս տալով . այլ և ընթացակիցք գոն ձեր առաքինիք անշեղ աւամբ 'ի նպատակէն՝ դիմելով , և ձեզ համարձակութիւն տալով . յաջմէ հոգիք հարց ձերոց նախնեաց ընտրելոց սաւառնեալ զգրօջս ցուցանեն զոսկեղինիկ տառն ֆԱՌՔ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ . և յահեկէ անհուն դասակք ուրուականաց ապագայ որդւոց Հայոց զգեռ տժգոյն զիւրեանց նշանն վերացուցանեն տարրացեալ 'ի նմա տառիւքս այսոքիւք , ՅՈՅՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ . և յառաջոյ ինքնին տերն համօրէն սրբովք և հրեշտակօք քրկատարած և պսակամատոյց մնայ ձեզ գոչելով , ՊՍԱԿՔ ՅԱՂԹԱԿԱՆԱՑ :

հ . Ղ . Մ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայկական հոտութեանց վրայ :

ԽՈՐՈՒՆԿ բաղձանքները մարդու սիրտը երկար ատեն որ գրաւեն , շատ մտածող կ'ընեն զինքը . և որչափ անձեռնհաս ըլլայ իր վառուած փափաքանացը հասնելու , կարծես թէ այնչափ ծանրութիւն ու մտմտութե մը կը տիրէ վրան . ալ անկէ ետքը զուարճութիւնն ալ տխրութիւնն ալ իր սրտեռանդն խորհրդոցը մէջ կը գըտնէ : Բնութեան առանձին և սոսկալի ամայութիւնները իրեն միութարական բան մը կուգան , և հոգին կարծես թէ ինքիմէ դէպ 'ի հոն կը քաշուի :

Երբայիսի զգացում մը կուգար նաև իմ վրաս՝ երբոր Սիջերկրական ծովը հեռուն ձգելով , Հերակլեան արձաններէն դուրս ելայ Ովկիանոսին վրայ սեպտեմբեր ամսոյն վերջերը : Են մեծ ծովուն լայնութեը համեմատ իմ բաղձանքներս ալ ընդարձակ կուգային կրնամ ըսել : Ետ առտուններ և շատ իրիկուններ նոյնպիսի անբաւ ջրերուն մէջ կը ծփէինք , և նոյն բնութեան ահեղ տեսարանն էր որ մեր չորս դին կը պատէր . թէպէտ կ'ամպոտէր երբեմն երկինքը , երբեմն ալ կը պարզէր , բայց մենք միշտ ան անհուն ջրերուն կեդրոնը կը գտնէինք զմեզ : Երաւ որ ան ահագին երևութիւն վրայ երկար ատեն պէտք չէր նայիլ՝ առանց յափշտակուելու հաճոյական խորհրդոց մէջ . անոնք ալ աս ջրեղէն սահմաններու վրայ չիյտեմ ինչպէս կ'աւելնային մարդու միտքը , և անբաւական սիրտը շատ հեղ կ'երէր կը մրկէր ու կը փղձկէր : Երկարութեան մէջ թռած անձայն հառաչանքները հովերը միայն

կ'իմանային, և իրենց արագութիւնը կ'առնէին կը տանէին չգիտեմ ինչ սահմաններ: Վիւցազնական աստուածընտիր երկիր, ո՛հ սիրելի Հայրենիք, որչափ քաղցր էր քու յիշատակդ ան կապուտակ անապատներուն մէջ. որչափ անուշ էր ինծի հոն տեղուանքը մտիկ ընել հին դարերուն վրայէն գողացող խորնոյ ծերունւոյն պատմութեանը սրտաւուչ ձայները:

Հայաստանի մտածութեամբը յափրջտակուած, շատ հեղձ մանաւանդ իրիկունները երբոր կը ճեմէի տագնապելով նաւերնուս տախտակամածին վրայ, աչքս կը դարձնէի ծովուն աներկիր եզերացը վրայ, կը տեսնէի երեկոյեան անձառագայթ շառագոյն արեգակը որ ջրերուն ծիրը իջնալով կ'ընկղմէր ու կը թաղուէր անոնց մէջը: Վեռ ես իմ սիրուն խորհրդոցս մէջ ընկղմած՝ ինծի պզտիկուց՝ ի վեր անուշ մոլութիւն մը եղած հնասիրութիւնը մէկէն կը տանէր միտքս Հայաստանի ու Հայոց հնութեցը մէջ: Վանի որ մութը կոխէր, ու աչացս կտրած ծիրը որչափ աղօտանար ամփոփուէր, այնչափ աւելի կը թաղուէի ես ալ հին ժամանակներուն և մեր Հայկազանց հնութեանց տեղուանքը: Վանգատիլս կուգար թէ ինչո՞ւ համար ոչ ազգային հնութեց թանգարան մը ունինք, ոչ անոնք բովանդակող ազէկ գիրք մը՝ որուն մէջ նկարած ու ստորագրուած ըլլան կարգով մը Հայաստանին սրբազան յիշատակները: Ինչուան վայրենի ազգաց հնութեանցը վրայ հատորներով փառազարդ գրքեր կան, և ոմանք թագաւորաց ընծայուած. իսկ Հայոց պէս պատուական ազգերնուս հնութիւնները դեռ լոյս չեն տեսած: Եսնոց վրայ կը մտածէի թէ արդեօք ինչպէս կրնանք գտնել, հաւաքել, հըրատարակել մեր շատոնց փառազուրկ ազգին նախնի պարծանքները, որ անգութ ժամանակին ձեռքէն խալըսած՝ դեռ աշխարհքիս զանազան անկիւն.

ները կը գտնուին, մանաւանդ մեր բուն Արամեան աշխարհքին հիմնկուան սև քօղին: Երբեք ծածկուած: Ես սրտեռանդն փափաքիս դեմ մէկ կողմէն դժուարութիւններ ելլելով՝ միտքս կը նեղէին, միւս կողմէն ես ինծի յոյսեր ու երեւակայեալ հնարքներ կը շինէի, ինչուան գիշերային մութը երկնից գմբեթէն վար համատարած ջրոց վրայ կ'իջնար, ամպերը սև ստուերներով կը պրլուէին, ու ծովը թուխ կապտութիւն մը զարկած ալեաց գալարուն գլուխները ձերմակ ձերմակ կը փրփրացընէր: Հովը ան ջրերը կը յուզէր, ու քովընտի ծռած առագաստաբաց նաւերնիս ալեաց հետ ծեծկուելով կը հեծէր ու առջ կը վազէր:

Արիշ ինչ զուարճալի զբաղանք կրնար ըլլալ ինծի այնպիսի ատեն՝ բայց եթէ նստիլ նաւուն մէկդի պառկած կողմը, և մէյմը քովէս վազող արշաւասոյր ջրերուն վրայ աչքս դարձնել՝ որ փրփրագէզ փոսփորեան լուսիկներով կը փալփլային, մէյմ՝ ալ երկնից բիւրաւոր աստեղացը որ իրենց համաստեղեան գաւառներէն հեռուները թափանցել կուտային մարդուս միտքը. ո՛հ ինչ զմայլական էր ան խաւարազգած գիշերուանը մէջէն նուագարանի մը գեղգեղանքը. ինչ անոյշ կը թուէին մթնշաղօգին մէջ երաժշտական սրտակոտոր հնչմունքները: Բայց ես ուրիշ նուագարան մը կը գտնէի իմ սրտիս մէջ, և յարավրդով բաղձանացս հոսանքին մէջէն եօթը հատ ոսկեզօծ լարերով արծաթի քընար մը կը կանգնէի կը դնէի նաւուն եզերքը; ուր խորհրդափոխ մտածութեանցս մատուրները կը կայտուէին սրտաթունդ թրթռանօք, և զմայլութեամբ կ'անցնէին դիւրասահ վայրկեաններս: Վնարիս լարերուն անունները հնութեանց այլ և այլ տեսակներն էին, ու ես անոնց ձայնովը աւանդապահ հայկական աշխարհաց մէջը կը թափառէի մտքով: Ե՛հ եօթնաղի այլաբանական քնարիս շարքը:

Ճարտարապետական հնուիք, Վանգակագործականք, Կհարչականք, Ըրձանագրականք, Գրամականք, Օինուց սպառազինութեանց, և Ասհուց կարասեաց :

Ըրդձակերտ խորհուրդներով հին Հայաստանին աւերակացը մէջ կը դեգերէի, ու կ'անցնէի անոնցմով բուր հին դարերը : Ինչ Ըրմաւիրներու, Ըրտաշատներու, Սաղարչապատներու, Գառնիի, Ընուոյ պէս քաղաքներ կը նկարուէին աչացս առջևը ան միջոցը : Մեր նախնեաց գեղեցիկ յիշատակարանացը մէջ պէտք է, կըսէի, գտնուին Բաբելացուց, Պարսից, Յունաց, Ըրաբացուց, և արևելեան Հուռոմոց ճարտարապետական արուեստին ոճերը՝ հայկական պարզ ախորժակով մը գեղեցկացած, Ստրաբոնին յիշած Կորդուացի ճարտարապետները և Մանուէլներն ու Տրդատները չէի մոռնար՝ որ մեր մէջ վարպետութեան արհեստը փայլեցուցին :

Սակայն միայն մեր ճարտարապետական շքեղութիւնները չէին միտքս եկողները . կը յիշէի նոյնպէս մեր նախնեաց Վանգակագործական և Կհարչական յիշատակները, հին արձանագրութիւններ, ու մեր զանազան թագաւորութեանց ժամանակին պէսպէս փառաւոր մնացորդները : Ուր են կ'ըսէի մեր Ըրշակունի, Բագրատունի, Ըրծրունի, Սուբինեան թագաւորութեանց դրամները, անոնց ժամանակէն մնացած դրօշները, զօրաց և զօրապետաց զրահներ և զէնքեր, ուրիշ արուեստակերտ անութոյ, կահուց կարասեաց մնացորդներ . ինչո՞ւ Խանգարան մը չկայ ասոնց համար ալ, ինչպէս որ ուրիշ հին ազգերէն ոմանց համար այսպիսի թանգարաններ շինուած են Լըրուպա : Ինչպէս և մեր երկիրը աշխարհքիս ուրիշ կողմերէն շատ աւելի քան դուած ու աւրուած ըլլայ, այսու ամենայնիւ մնացած աւերակները մեզի մեծ մեծ յոյսեր չեն արդեօք դեռ ա-

սանկներ գտնելու : Ըէ, թէ որ Ըսուի թէ Հայերը բարբարոս ազգ են եղեր ու ասանկ բաներ չեն գործածած, հապա ինչո՞ւ դեռ Ընուոյ, Գառնիի աւերակաց պէս մեր քանդուած քաղաքներուն սգալից աւերակները Հայաստան ժուռ եկող ճամբորդին սարսափ ու զարմանք կը բերեն : Խոհական ճանապարհորդը մտածմունքի կուգայ թէ աս ինչ ժողովուրդ է եղեր աս քաղաքները կանգնող ու մէջը բնակող ազգը : Մտածելով մեր հնութեանց տեսակ տեսակ կորուստները, փափաք մը կուգար սրտիս որ մեր Հայկազանցս համար ալ գոնէ Կիւլթացի Ընաքարսիս մը ըլլար որ մեզի ալ պատմէր հին Ըրամազնեայց փառքը և իրենց կերպ կերպ սովորութիւնները, ազգային ու կրօնական հանգէսներն ու արարողութիւնները և արհեստները նկարագրելով :

Միտքս աս խորհրդոց հետ զբաղած երբոր դեռ հնարքներ փնտուելու հետ էի Հայոց հնութիւնքը գտնելու, ՚ի լոյս հանելու, գրքերու մէջ փառաւոր պատկերներով ստորագրելու, ու դեռ մտօքս Հայաստանի աւերակացը վրայ իբր թէ կը շրջընջէի, մէյմ' ալ հարկ կ'ըլլար գլուխս վեր առնուլ՝ արթննալ անուշ թմրութենէ մը կամ նաւաստեաց ողբական եղանակներէն կամ ուրիշ աւթով մը . տրտմախառն նայուածքով մը աչքը կը դարձնէի երկնից վառ ՚ի վառ ջահերուն, և չորս դիս պատած կը գտնէի գիշերային ովկիանեան սօսաւիւն մը :

Չգեղք ուրեմն ան ծովը իր ահեղ գեղեցկութեր հետ մէկտեղ, և տեսնէնք թէ ինչ հնարքներ կրնանք արդեօք բանեցնել մեր ազգային պատմական գանձը հնութեամբք, աւելցնելու իր օգտին և փառացը համար : Ըս բանս Լըրուպայիք թագաւորաց ձեռնտուութեամբ և հարստութիւն կ'ընեն . կ'երթան հեռաւոր սահմաններ ժուռ կուգան՝ հնուց մնացած սակաւագիւտ աւանդներ ժողովելու . իսկ մե՞նք մեր դիտաւորութեանը

հասնելու համար արդեօք ինչ պիտի ընենք :

Արբոր ծովերը անցնիլ լճնցաւ , ու նոր աշխարհք մը՝ միլիոնաւոր ժողովուրդ մը տեսայ որ չկարծուած ու մտքերնէս չանցած զարգացմամբ աւաջ էին գնացեր քաղաքականութիւն խիստ հարկաւոր իրաց մէջ , տեսայ ալ որ իրենց յառաջադիմութիւն մեծ պատճառը ընկերութիւններն են , մանաւանդ աղէկ ընկերութիւններ գործածելուն եղանակը , ալ աւելի համոզուեցայ ազգերնուս ալ յառաջադիմութեան եղանակը մի միայն աս ըլլալուն , այսինքն Միկերութիւն : Սիրտս աս փափաքով լեցուած՝ ի դարձիս ալ երբոր տեսայ որ ընկերութիւնները ազգերնուս մէջ աւելցեր են , և մեղուներուն բնական փիլիսոփայութիւնը աղէկ ճանչցուեր է մեր մէջ ալ , ատենն է ուրեմն ըսի՝ հնագիտական ընկերութիւն մըն ալ հաստատելու , մեր նախնեացմէ մնացած սրբազան աւանդները՝ հնութեց անգին մասունքները՝ ի լոյս հանելու , որ մեր պատմութեան վկայ և ապացոյց կ'ըլլան յաւիտեան :

Միկերութեան ամենահարկաւոր գործն է՝ ձեռնալուն պէս՝ ետեւէ ըլլալ հնագիտական օրագիր մը հանելու , առանց որոշեալ ժամանակի՝ որպէս զի բռնի նիւթեր չգրուին մէջը , այլ հետ զհետէ ինչ նոր հնութիւններ որ դուրս ելլեն մեր ազգին վերաբերեալ , անոնք քննութեամբ ու տեղեկութեամբ ստորագրուին : ( ) րագրին պատշաճ տախտակներ ալ ըլլան՝ որուն մէջ ստորագրուած հրնութեց ճշգրիտ պատկերներ գրուին թուանշաններով նշանած : Ար և է վիճակի մարդ՝ կարենայ աս օրագրիս յօդուած գրել , բաւական է որ տեղեկութեամբ ըլլայ գրուածը , և վերան քննութիւն ըլլուի լոյս ելլալէն առաջ : Այնպէս որ և իցէ ազգէ մէկը որ հայու հնութեանց վրայ տեղեկութիւն մը տայ , ընկերութիւնը սիրով ընդունի և շնորհակալ ըլլայ : Ա՛ա-

նաւանդ՝ թէ որ հնութիւն մը կամ իրօք խաւրէ կամ ուրուագիծը խաւրէ , տպուելու ժամանակ իր հաւանութեամբը անունը դրուի՝ գովելով իր հայրենասիրութիւնը : Միկերութիւնը այսպիսի գործողութեան մը համար պէտք է ստորագրութիւն մը ունենայ՝ թէ ծախուցը դրամը ժողովուրդ և թէ նոր հնութիւններ գտնել կարենալու համար : Արբոր իր առաջին երախայրիքը հանէ և հաճելի ըլլայ , անտարակոյս ազգերնուս իմաստասէր և հայրենասէր մեծամեծքը կը ստորագրուին ընկերութեանը , և թէ դրամով՝ թէ սատարութեամբ կը քաջալերեն այնպիսի օգտակար ընկերութիւնը : Այսով գրգիռ մը կ'ըլլայ , ամէնքը կը ջանան նոր հնութիւն մը առաջ բերելու . և ո՛վ որ գտնէ կամ ծանուցանէ մէկ հնութիւն մը որ անկից պատմական տեղեկութիւն դուրս կը ցատքէ , գովասանքի կ'արժանանայ՝ ինչպէս թէ նոր պատմութիւն մը գտած ըլլար :

Այս արժամ այսչափ ազգարարութի մը կրնանք ընել ընկերութեան գործողութեանը վրայօք . երբոր սկսի , անդամներուն խոհական և միաբան մտածութեամբը՝ ըստ ամենայն պարագայից հարկաւ պայմաններ և սահմանադրութիւններ կը հաստատուին , և ընկերութեամբ , որ է ըսել սիրով և միութեամբ , դրուած վախճանին կը հասնուի :

Հիմա տեսնենք թէ վերը եօթը տեսակ բաժնած հնութեանցս ամէն տեսակէն կը գտնուի հայկական հրնութեանց մէջ , և իրաւացի յոյսեր կան հետազօտութեամբ գտնելու :

Ա. Նարտարապետական հնութեց կարգին մէջ կը մտնեն հայաստանի բոլոր հիմակուան աւերակները , քաղաքներու , բերդերու , վանքերու և եկեղեցեաց , գերեզմաններու և տապաններու մնացորդները : Վննելով և տեղեկութեամբ քանակներ՝ ի լոյս կու գան՝ հին պատմիչներնուս աւանդութեանցը հետ բազմատեղով , ինչ-

պէս որ ազգատէր աշխարհագիրնե-  
րուն, ու մեր օրերը Շ ահիաթու-  
նեան և Պ ալալեան արդիւնաւոր վար-  
դապետներուն աշխատութեցը մէջ  
եղած է . բայց լաւ ևս կ'ըլլայ թէ որ  
ստորագրուած շէնքերուն պատկեր-  
ներն ալ միատեղ գրուին : Արբոր մեր  
ճարտարապետական մնացորդայը վը-  
րայ քննութիւնները լլայ, անոնց կարգ  
և բաժանումն կ'ըլլայ ըստ ոճոյ ար-  
հեստին և ըստ ժամանակագրութե :  
Ըմէն մէկ գարուն շէնքերը զատ զատ  
կը բաղդատուին Րաբելացւոց, Պար-  
սից, Յունաց, Արաբացւոց և արևե-  
լեան Հուռոմոց շէնքերուն ոճին հետ .  
ինչ որ անոնց նման է՝ ըստ այնմ կը  
չարուի, և ինչ որ մասնաւոր հայկա-  
կան ճարտարապետութեան ոճ է՝ ան  
ալ կ'իմացուի, և պարծանք մը կ'ըլ-  
լայ ազգերնուս :

Բ . Րանգակագործութեան մէջ  
կը դասուին արձաններ, փորուած  
ու քանդակուած քարեր, նաև պատ-  
կերաւոր փորագրուած և քանդակած  
գոհարներ : Ատքի յիշածնիս Աւրո-  
պացիք մասնաւոր հնութեանց կարգ  
կը սեպեն . բայց մեր մէջ աս տեսակ  
հնութիւն քիչ կարծուելուն՝ քանդա-  
կագործութեան հետ գրինք՝ երկուքն  
ալ քարի վրայ բանուած ըլլալուն հա-  
մար : Արձաններու համար մեր պատ-  
մութիւններէն գիտենք որ Արշակու-  
նեաց ժամանակները շատ կան եղեր,  
եթէ մահարձաններ, եթէ կռոց  
գրոշուածներ, եթէ թագաւորաց և  
յիշատակարանաց արձաններ . Րագ-  
րատունի և Արծրունի թագաւորաց  
ժամանակէն դեռ կը գտնուին ար-  
ձաններ Հայաստան, իրենց թագու-  
հիններն ալ քովերնին կեցած : Վու-  
ցէ կարծուէր թէ Հայոց մէջ փորա-  
գրեալ քարեր չեն եղած, բայց հակա-  
ռակը մեզի կը ստուգէ Աշուշայ բը-  
գեշիին գէմքը փորուած ազնիւ մեծ  
եղնգնաքար մը՝ որ Փարիզու հնու-  
թեանց արքունի թանգարանն է . վը-

րան գէմքին բոլորաթիբը փորագրուած  
է : Յունաց հին գրերով, ԱՇՈՒՇԱՅ  
ԲԴԵԱՇԽ ՎՐԱՑ ԵՒ ԳԱՐԳԱՐԱՑԻՈՑ :

Գ . Ահարչութեան վերաբերեալ  
ալ ինչ որ հին եկեղեցիներու մէջ  
կամաւերակներու վրայ գտնուի՝ կը  
նայ տեղեկութեամբ և նման ձևովը  
օրագրին մէջ ստորագրուիլ : Սիւ-  
սիոններն ալ որ ըլլան, ինչպէս Անուոյ  
աւերակ պալատանց վրայ տեսնուած  
է, կրնան աս կարգը անցնիլ : Արնան  
նաև ձեռագրաց ճակատները եղած  
նկարապաճոյճ զարդերն ալ տպուիլ,  
որ ասենին ախորժակը կը յայտնեն,  
և արհեստից վրայ լոյս կուտան . նոյն-  
պէս ուրիշ ժամանակակից ազգաց ա-  
րուեստին հետ կը բաղդատուին, ու  
Աւրոպացւոց առջևն ալ շատ յարգի  
կ'անցնին :

Դ . Արձանագրութեց կարգն ալ  
ոչ միայն հին շէնքերու և եկեղեցիներ-  
րու վրայի հայերէն գրուածքները  
կրնանք հրատարակել, հասլա նաև  
Ս անայ բերդին սեպածե գրերը, նոյն  
պէս Հայաստան գտնուած օտար լե-  
զուով արձանագրութիւններ, պարս-  
կերէն, յունարէն, նաև Արաբացւոց  
գրով ու լեզուովն ալ որ ըլլայ : Սե-  
րոպեան տառերնուս ալ հին ձևերը  
և անոնց դարէ դար փոփոխութիւն-  
ները հին ձեռագրաց մէջէն հանելով  
տպելը շատ օգուտներ կրնան ունե-  
նալ : Ձեռագրաց վրայ ալ զանազան  
հետաքրքրական տեղեկութիւններ  
կրնան տրուիլ : Այ հին գրերուն վրայ  
խոյզ և ինդիր ընելը մասնաւոր բա-  
ռով ըստ Աւրոպացւոց հնագրու-  
թիւն՝ կ'ըսուի :

Ե . Վրամներու վրայ նախ ընդհա-  
նուր տեղեկութիւն կը տրուի, ինչ-  
պէս Հայկազունք ինչ դրամ կը գործ-  
ածեն եղեր արդեօք . յայտնի է թէ  
Ասորեստանեայց, ետքն ալ Պարսից :  
Րայց մենք թէ ասոնց՝ թէ Արշակու-  
նեաց և թէ մէկալ մեր թագաւորաց  
գրամներուն վրայ զատ ալ կը խօսինք :

Չ. Օ ինուց և սպառազինութեց մէջ կը հասկընանք մեր հին ատենի զօրականներէն մնացած տեսակ տեսակ զէնքեր, ինչպէս թուր, վաղակաւոր, դաշոյն, սակր, վաղը, տէգ, աղեղն և կապարճ, զրահ, վահան և սաղաւարտ. մէկ խօսքով, ամենայն պատերազմի գործիքներ, բերդ առնելու մեքենաներ, պատերազմական կիճ հանդէսի դրօշակներ, փողեր և նրւագարաններ կամ անոնց պատկերները: Երանկներ թէ հայաստան, և թէ Ռուսաստանի թանգարանաց մէջ կամ հայազգի մեծամեծաց քով կրնան գտնուիլ, որ հնագիտական օրագրին մէջ իրենց պատկերովը տրւուեցնուն՝ բոլոր ազգը կը վայելէ իրեն նախնի պարծանքները: Կոր հայաստանին, և Շահխաթունեանին գովելի ճանապարհորդութեանը մէջ ասանկներ շատ կը յիշուին. ինչպէս նոյն գերապատիւ եպիսկոպոսին Ուղեւորութեանը մէջ յիշուած է (Հատ Բ. էր. 307) «Յոհաննէս թագաւորին դրօշը որ բիւրեղէ խաչ մըն է կ'ըսէ, նժե թուականաւ, որ է Վրիստոսի 966:

Է. Կահուց կարասեաց զանազան հին մնացորդներէն ալ կ'իմանանք մեր աշխարհքին հին ատենի վիճակը՝ իրեն արհեստից մէջի յառաջադիմութեամբը: Եգի մը բարբարոսութի հեռու ու քաղաքավար ըլլալը՝ իրեն գործածած տնական կահուցը բարակութենէն ալ կ'իմացուի: Կրաւ, թէ որ Չինաց, Հնդկաց, Եգիպտացուց և Յունաց հասած ալ չէինք արուեստից մէջ, գոնէ դրացի Պարսից ազգէն վեր սեպուինք. ազգերնուս հիմակուան արուեստից յարմարութի ալ նոյնը կը ցուցնէ: Կարասեաց ընդհանուր դասաւորութիւնը ըստ զանազանութե նիւթոց զանազան կարգ կը բաժնուի. և կրնանք որոշել այսպէս. Կրօնական և Եկեղեցական սպասք, Ենթ, Եգանելիք, Օարդարանք ոսկի և արծաթ, այլ Տնական կահք, Կործիք զանազանք:

Կրօնական և եկեղեցական սպասուց մէջ՝ նախ հեթանոսութե ժամանակէն նշմարանք մը թէ որ գրտնուի, անոր վրայ տեղեկութիւններ կը տրուին. բայց աւելի կրնանք մեր հայոց եկեղեցուց հնուց ունեցած զարդերը, արարողութեանց սպասները և զգեստները նկարագրել, և մեր արարողութեց վրայ հետաքրքրական տեղեկութիւններ տալ:

Հին անօթները մասնաւոր հնութեան կարգ դրած են Եւրոպացիք (ինչպէս Րազմավէպը մասնաւոր Եւրոպացուց անօթներուն վրայ խօսած է), և Եւրոպա անօթից համար զատ թանգարաններ կան: Եր մէջ աս տեսակ հնութեանց վրայ ալ ծանօթութիւն եղած չըլլաւուն, մէկը կրնար ըսել որ հայոց մէջ դամբանական սափորներ ու խեցեղէն անօթներ չեն գործածուած. բայց ես հոս դնեմ Տիւպուա ճանապարհորդին մէկ հատուածը՝ քաղելով, որով կը տեսնենք ընդհակառակն մեր մէջ ալ սափորոց հետքը. «Հարաւային կողմանէ (կ'ըսէ, Երտաշատ քաղաքին վրայ խօսելով) մեծ պատուարին միջոցները... տասնի չափ դամբանական բլուրներ գտայ, սափորներու կտորուանք և այրած ոսկորներ դիզուած: Ենթներուն կտորուանքէն աւել, ու անոնց խմորը ինծի նշանաւոր երեցաւ, վասն զի այլիկած էր և դեղին ու կանաչ գոյներով նկարուած վրան կիտուածով, մեր հասարակ բրտի անօթոցը պէս: Երանկ էր բանուածքը. կանաչ գոյն մը տալէն վերջը անօթներուն, վրանին գործիքով մը շինելու նկարներուն տեղը քերթեր են, յետոյ ան քերթած զարդի տեղուանքը թանձր կիտուած լեցուցեր են. անանկ է եղեր որ ամաններուն ճակարուած տեղերը՝ աւելի բարձր և ուռած մնացեր են: Երովհետեւ գերեզմանական սափորներ են ասոնք, պէտք է որ քրիստոնէութենէ աւաջ մնացած ըլլան, և Գ դարէն

առաջ : Ամ գիտեր թէ ասանկ  
 ապիկած անօթներ ասոնցմէ հին  
 տեսնուած են արդեօք . վասն զի ոչ  
 Պանտիկապէոն (Աէրչ), ոչ մեծն  
 Յունաստան և ոչ հիւսիսային Վեր  
 մանիա (որ շատ հարուստ են հին  
 սափորներով) աս տեսակ անօթ-  
 ներ ամենեկին չեն երևցած : Ատո-  
 ռուանքներ ալ կան ասոնց մէջ որ  
 ապիկած չեն, բայց բարձրաբան-  
 դակնկարներով զարդարուն են . . . . .

Տնական ուրիշ կահերով ալ կ'իմա-  
 ցուին աթոռներու պէս կամ սեղանի  
 վերաբերեալ կամ տան զարդարանքի  
 և հանգստութեան վերաբերեալ կա-  
 րասիքները :

Աքանէիք ըսելով բոլոր հին Հայ-  
 աստանցոց զգեստները կ'իմանանք  
 ամէն կարգի մարդկանց . թագաւո-  
 րաց, իշխանաց, եկեղեցականաց, քա-  
 դաքացեաց, կանանց և զօրականաց :  
 Այ զգեստներուն ձևերը ուրիշ հնու-  
 թեանց վրայէն կ'իմացուի . զոր օրի-  
 նակ Տիգրանայ դրամին վրայէն Հայոց  
 թագաւորին խոյրին ձևը : Հին թա-  
 քի մը պատկեր կայ որ մեր Տրդատ  
 թագաւորինը կը կարծուի, և կ'ըսեն  
 թէ Արդանդ պահուած է : Այնպէս  
 Հռոմայեցւոց ալ հին յիշատակարան-  
 ներէն շատ բան կ'ելլէ Հայաստանի  
 վերաբերեալ : Վիտոզութի կ'ըլլուի  
 ան զգեստներուն որ Հայերը ունին  
 եղեր մերձաւոր ազգաց նման, Պարս-  
 կին, Յունին, Արացոյն հետ . և ան  
 հագուստները որ մասնաւոր Հայոց  
 սեպհական են եղեր : Արեւնայ թէ  
 նաև նահանգէնահանգ Հայոց զգես-  
 տին մէջ տարբերութիւն եղած պի-  
 տի ըլլայ :

Ասկի արծաթ զարդարանքներով  
 ալ կ'իմանանք մատանիներ, օղեր,  
 կնիքներ, և արանց ու կանանց տե-  
 սակ տեսակ զարդեր :

Վործիքներու մէջ պէտք է յիշենք  
 երաժշտական նուագարանները : Ա-  
 սոնց ձևերը տալէն զատ, ազգային  
 երաժշտութեան վերաբերեալ տեղե-  
 կութիւններ ալ աս հնագիտական

օրագրին մէջ կրնան գրուիլ : Այն-  
 պէս երկրագործութեան և ուրիշ ա-  
 ռուեստներու գործիքներ որ հնուց  
 մեր աշխարհքը մնացած ըլլան՝ կրնան  
 օրագրիս մէջ ստորագրուիլ :

Ազգային հնութեանց վրայօք ա-  
 ռաջարկութիւնս կը լմնցընեմ՝ յիշե-  
 լով որ եթէ ասանկ հնագիտական  
 օրագիր մը նաև գաղղիարէն թարգ-  
 մանուի՝ շատ հաղորդակից օգնական  
 նաև քաջալերիչ Աւրոպացիք կը գըտ-  
 նուին : Այս աս բանիս օրինակ մը տա-  
 լու համար՝ ուրիշ անգամ աս Ռազ-  
 մավէպիս մէջ մէկ քանի ազգային հը-  
 նութեանց վրայ կը խօսինք :

ՍԵՐՈՎԻՒ Մ • ԱԼԻՇԱՆ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սո-շակ :

ՍՈՒՋԱԿ կ'ըսուին ան տեսակ ջը-  
 րային թռչուններն որ ուրիշներէն  
 շատ աւելի ժամանակ ջրին տակը սու-  
 զած՝ այսինքն բոլորովին ընկղմած  
 կրնան մնալ ու լողալ : Ասոնց ոտուր-  
 ները գրեթէ անմիջապէս իրենց պո-  
 չին տակն են . անոր համար ցամաքի  
 վրայ խիստ դժուար կը քայլեն . թռե-  
 նին ալ պզտիկ ըլլալով՝ աղէկ թռչե-  
 լու յարմարութիւն ալ չունին : Իրենց  
 վրայի փետուրները խիստ թանձր ու  
 եղոտ են . անով է որ ջրին տակը եր-  
 կար ատեն մնալով՝ ոչ կը թրջին և ոչ  
 կը մրսին . թոքերնուն կազմուածքը  
 այնպէս է որ առանց շունչ առնելու  
 կրնան կենալ շատ ժամանակ :

Սովորաբար ասոնք խումբ խումբ  
 կը գտնուին գետերու և լճերու մէջ,  
 ու ճճիներով որդերով և մանր ձկներ

1 Յն . Κόλυμβος . 1<sup>ա</sup> . Podiceps կամ Colymbus .  
 Խա . Suasso, և tuffolo կամ tuffetto . Գղ . Grèbe,  
 և plongeon . Մեր մէջ ոմանք խոչնդէր գրեր են ա-  
 նունը, բայց Սո-շակ բառը մեզի լաւագոյն երևցաւ :